

ԿԸՀ «ՀԱՊՇԱՊ» ՔԱՅԼԵՐԻ ՄԵՋ ԱՐՏԱՍՈՎՈՐ ԲԱՆ ԶԿԱ



«Հանրաքվեի մասին» փոփոխված եւ լրացված օրենքը վերջերս մտավ ուժի մեջ: Ինչին անմիջապես հաջորդեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արտահերթ նիստը, որի ընթացքում ընդունվեցին օրենքից բխող համապատասխան որոշումներ: Մեզ հետաքրքրող հարցն այն էր, թե նման շուտափույթ նախապատրաստական աշխատանքները արդյոք միտված չէ՞ն սահմանադրական բարեփոխումների հնարավոր հանրաքվեի նախապատրաստմանը:

ԿԸՀ նախագահ ՏԻԳՐԱՆ ՄՈՒԿՈՒԶՅԱՆԻ պատասխանը միանշանակ էր՝ ոչ: Այս որոշումներն ընդունելը բնավ որեւէ կոնկրետ միջոցառման հետ կապ չունի, քանզի «Հանրաքվեի մասին» օրենքը չի կարող վերաբերել կոնկրետ մեկ համապետական միջոցառման: Մակայն եթե այս ժամանակահատվածում Հայաստանում կայանա հանրաքվե, ապա այն «կկարգավորվի հենց այս օրենքի դրույթներով»:

ԿԸՀ նախագահը նկատեց, որ դա վերաբերում է նաեւ իրենց ընդունած ակտերին. «Եթե մենք սահմանում ենք էլեկտրոնային եղանակով քվեարկության կարգ, դա չի նշանակում, որ մենք կոնկրետ հանրաքվեի համար ենք այդ կարգը սահմանում: Նույնը վերաբերում է նաեւ հանրաքվեի քվեաթերթիկի ձևի եւ շարադրանքի սահմանմանը: Մենք ոչ թե սահմանել ենք կոնկրետ հանրաքվեի քվեաթերթիկի ձևը, այլ թե

ինչպիսին պետք է լինի քվեաթերթիկը բոլոր հանրաքվեների ժամանակ»:

Ասել է թե՛ ներկա փուլում ԿԸՀ-ի նպատակը եղել է ամրագրել ընդհանուր բնույթի ձևակերպումներ եւ ընդհանրապես սահմանել այն իրավակարգավորումները, որոնք բխում էին օրենքի պահանջներից: Իսկ այն պահին, երբ մեր երկիրը կկանգնի կոնկրետ հանրաքվեի անցկացման անհրաժեշտության առաջ, այդ ժամանակ արդեն ԿԸՀ-ն, հիմք ընդունելով իր իսկ ընդունած նորմատիվ որոշումը, կկատարի կոնկրետ քայլեր՝ ուղղված տվյալ հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանը:

«Եթե վաղն իսկ նշանակվի հանրաքվե, մեր ընդունած նորմատիվ բոլոր որոշումները կլինեն այն իրավական ակտերը, որոնցով կկարգավորվեն ամբողջ իրավահարաբերությունները: Այդ ժամանակ արդեն կընդունենք, օրինակ, տվյալ հանրաքվեի ժամանակ կիրառվող քվեաթերթիկի նմուշը, որում տեղ կգտնի նաեւ հանրաքվեի դրված կոնկրետ հարցը»:

Այդուհանդերձ, ինչո՞ւ օրենքը ուժի մեջ մտնելուց հետո անմիջապես ու այդչափ հրատապ ԿԸՀ-ն ընդունեց իրավական ակտերը: Տ.Մուկուչյանի պարզաբանմամբ՝ առաջնահերթ են համարել իրազեկման գործոնը. «Շատ կարեւոր է, որ ընտրական, նաեւ հանրաքվեի գործընթացի մասնակիցները՝ ընտրական հանձնաժողովների անդամներից սկսած մինչեւ դիտորդներ, վստահված անձինք, քաղաքացիներ, հնարավորինս շուտ իրազեկված լինեն այն կանոնակարգումներին, որոնք կիրառվում են հանրաքվեների կազմակերպման ժամանակ: Ահա թե ինչու օրենքի ընդունումից հետո անմիջապես ձեռնամուխ եղանք նախագծերի մշակման աշխատանքներին եւ առաջին իսկ օրը ընդունեցինք իրավական ակտերը»:

Տեղեկացնենք, որ ԿԸՀ արտահերթ նիստում ընդունվել են մոտ երկու տասնյակ իրավական որոշումներ: Իսկ թե մասնավորաբար ինչպիսի՞ փոփոխությունների մասին է խոսքը, ԿԸՀ նախագահը նկատեց, թե կատարվել են տեխնիկական շտկումներ ու նաեւ բովանդակային փոփոխություններ, որ բխում են խորհրդարանի ընդունած «Հանրաքվեի մասին» օրենքի տրամաբանությունից:

Հիշեցնենք, Ազգային ժողովը դեռ ամիսներ առաջ, պատգամավորական նախաձեռնության կարգով, ձեռնամուխ եղավ «Հանրաքվեի մասին» օրենքում փոփոխություններ, լրացումներ կատարելուն, ինչի նպատակը 2001-ին ընդունված «Հանրաքվեի մասին» օրենքն ու 2011-ին ընդունված նոր Ընտրական օրենսգիրքը համահունչ դարձնելն էր:

«Մինչ խորհրդարանի կողմից օրենքում փոփոխություններ, լրացումներ կատարելը, երբ փորձում էինք Ընտրական օրենսգրքի համապատասխան դրույթը դիտարկել «Հանրաքվեի մասին» օրենքի համատեքստում, ակնհայտ էին դառնում հակասությունները»,- նշում է մեր գրուցակիցը: Հետեւաբար ԿԸՀ խնդիրը առաջին հերթին եղել է այն, որ երկու իրավական ակտերի միջեւ չլինեն հակասություններ, եւ ունենանք «Հանրաքվեի մասին» այնպիսի օրենք, որն ի գորու կլինի կանոնակարգելու հանրաքվեների կազմակերպումն ու անցկացումը:

Բացի դրանից, չնայած ասում ենք, թե հանրաքվեի իրավահարաբերություններն ունեն նմանություն ընտրական իրավահարաբերությունների հետ, այսինքն՝ քվեարկության գործընթաց, ընտրողների ցուցակների կազմում, հրապարակում, սրանք գործառույթներ են, որ իրենց բնույթով շատ նման են միմյանց, բայց միեւնույն ժամանակ հանրաքվեն ու ընտրությունները նաեւ ունեն տարբերակիչ լուրջ առանձնահատկություններ:

Ըստ Տ.Մուկուչյանի. «Եթե ընտրությունների ժամանակ կան թեկնածուներ, կա թեկնածուների առաջադրման, գրանցման ինստիտուտ, ապա այդպիսիք չկան հանրաքվեի ժամանակ: Եթե ընտրությունների ժամանակ քվեաթերթիկի բովանդակության մեջ շարադրվում է թեկնածուների անունը, ապա հանրաքվեի ժամանակ կա հանրաքվեի դրվող հարց: Եթե ընտրությունների ժամանակ անձինք իրենց վերաբերմունքն են արտահայտում այս կամ այն թեկնածուի նկատմամբ, ապա հանրաքվեի ժամանակ այդ վերաբերմունքը կոնկրետ հարցի նկատմամբ է դրսևորվում»: Մի խոսքով, ԿԸՀ-ն իրոք այս ընթացքում մեծ աշխատանք է հասցրել կատարել:

Դառնալով սահմանադրական բարեփոխումներին՝ ԿԸՀ նախագահին ներկայացրինք մեր դիտարկումն այն մասին, թե առաջարկվող նախագծով մի ամբողջ կառավարման համակարգ է փոփոխվում, երկրի նախագահն այլևս ուղղակի չի ընտրվի ժողովրդի կողմից, ինչը նշանակում է արմատական փոփոխություն նաև ընտրական գործընթացներում: Եվ ուրեմն, եթե ժողովուրդը «այո» ասի սահմանադրական բարեփոխումներին, սա արդյոք նշանակո՞ւմ է, որ դարձյալ Ընտրական օրենսգրքի նորացման անհրաժեշտություն կծագի:

«Ծանոթանալով սահմանադրական բարեփոխումների նախագծին, նրանում տեղ գտած իրավակարգավորումներին՝ ակնհայտ է, որ նրանցում կան այնպիսիք, որոնք նոր լուծումներ են ներկայացնում: Դրանք վերաբերում են թե՛ ԱԺ ձևավորմանը, ընտրակարգին, թե՛ ՀՀ նախագահի ընտրակարգին: Ի դեպ, այդ իրավադրոյթներում հղումներ են արվում Ընտրական օրենսգրքին, որպեսզի առանձին հարցեր, խնդիրներ մանրամասնորեն կանոնակարգվեն նրանում:

Ուրեմն բնական է, որ համապատասխան փոփոխությունների ընդունման պարագայում սահմանադրության դրույթները պետք է իրենց արտացոլումը գտնեն նաև Ընտրական օրենսգրքում»,- մեզ ասաց Տ.Մուկուչյանը:

Իսկ թե ինչպիսի՞ն կլինի ԸՕ հնարավոր բարեփոխումների ծավալը, գործը կհասնի՞ նոր օրենսգրքի ստեղծմանը, թե՞ ոչ՝ ցույց կտա ժամանակը: Ավարտելով մեր գրույցը՝ ԿԸՀ նախագահը հարկ համարեց հատուկ ընդգծել նաև հետեւյալը. ժամանակին միջազգային փորձաքննություն անցած գործող Ընտրական օրենսգրքը փորձարկվել է անցած երկու՝ նախագահի ու Ազգային ժողովի համապետական ընտրություններում, այն պարունակում է կազմակերպչական բնույթի այնպիսի լուծումներ, որոնք տարբեր անգամներ են կիրառվել ու որեւէ քննադատության չեն ենթարկվել: Այնպես որ, անհրաժեշտ փոփոխության դեպքում հարկ կլինի նաև սա հաշվի առնել:

Ա.ՄԻՄՈՆՅԱՆ